Ամփոփ նյութ

«ՅՈՒՓԵՅ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ «ՅՈՒՓԵՅ» ՓԲԸ-ի նկատմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց՝ վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերի պահանջների խախտումներ թույլ տալու համար:

Ստորև ներկայացված է որոշման վերնագիրը և եզրափակիչ մասը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՈՐՈՇՈՒՄ

11.03.2022թ. ԹԻՎ 1/09 ԾՕՀ-Ա

«ՅՈՒՓԵՅ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սույն որոշման նկարագրական մասում նշված խախտումները թույլ տալու համար Ընկերության նկատմամբ կիրառել **նախազգուշացում**՝ նման խախտումները հետագայում բացառելու, ինչպես նաև հետևյալ միջոցառումներն իրականացնելու հանձնարարականներով.
   - սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 1 ամսյա ժամկետում վերացնել սույն որոշման նկարագրական մասի առաջին կետով արձանագրված խախտումը,
   - սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 օրյա ժամկետում տեղեկացնել Կենտրոնական բանկին արդյունքների մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերություն մուտքագրվելու կամ Ընկերության՝ սահմանված կարգով լիազորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՄԱՐՏԻՆ ԳԱԼՍՏՅԱՆ